10388

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարարի
պարտականությունները կատարող՝
Արա Մկրտչյան

«26» 09 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 225 - 25

Նախաձեռնող՝ *«ՍՏԵՓՁՈՐ-1» ՍՊԸ*
ք. Երևան, Կենտրոն, Նալբանդյան փողոց 29/36

Գործունեությունը՝ *«Չքնաղ-1» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցում*
Լոռու մարզ, Ստեփանավան համայնք, Ուրասար բնակավայր

Առդիր՝ 5 թերթ:

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 225 - 25

«26» սեպտեմբեր 2025թ.

Լոռու մարզի Ստեփանավան համայնքում «Չքնաղ-1» փհէկի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ՍՏԵՓՁՈՐ -1» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն/նախագիծ
Գործունեության տեսակը՝	«Ա» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Լոռու մարզ, Ստեփանավան համայնք, Ուրասար, Ստեփանավան բնակավայրեր

Ներածական մաս. «ՍՏԵՓՁՈՐ -1» ՍՊ ընկերությունը նախատեսում է Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Ստեփանավան քաղաքի և Ուրասար բնակավայրի վարչական տարածքներում, Չքնաղ գետի ձախ ափին կառուցել փոքր հիդրոէլեկտրակայան /փհէկ/ 4,2 ՄՎտ դրվածքային հզորությամբ: Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի ՀՕ-150-Ն (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի «ժա» ենթակետի՝ ներկայացված գործունեությունը դասվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակի:

Ստեփանավան համայնքում «Չքնաղ-1» փհէկի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակված է հիմք ընդունելով՝ նախագծային փաստաթուղթը, հողատարածքների սեփականության վկայականները՝
N 03042024-06-0068, N 03042024-06-0076
շրջակա միջավայրի նախարարության կողմից տրամադրված ջրօգտագործման թույլտվություն՝ N 413-24, տրված 27.09.2024թ,

Նկարագրական մաս. Համաձայն կադաստրի կոմիտեի կողմից տրված անշարժ գույքի վկայականների ընկերությանը վարձակալությամբ Ստեփանավան քաղաքի տարածքում տրամադրվել է 0,25 հա ջրային հողեր, հողամասի կառուցապատման իրավունքով, Ուրասար բնակավայրի տարածքում՝ 0,4հա հողատարածք, գյուղատնտեսական նպատակային նշանակությամբ, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ արոտավայրերի: Փհէկը նախատեսում է օգտագործել Չքնաղ գետի ջրերը, հանդիսանալով Ձորագետ գետի աջափնյա վտակը,որը թափվում է վերջինիս մեջ գետաբերանից 26կմ տարածության վրա: Չքնաղ գետը իր սկզբնամասում իրենից ներկայացնում է քիչ մշակված, V-անման ձորակ: Լանջերը ծածկված են ալպիական և մերձալպիական մարգագետիններով:

Գործունեության տարածքը գտնվում է մոտակա Ուրասար բնակավայրից 346մ, տեղական ավտոճանապարհից՝ 51մ հեռավորության վրա, Ստեփանավան քաղաքից՝ 123մ :

Փիէկի մեջ են մտնում հետևյալ հիմնական կառուցվածքները՝

1. Պատվարային ջրընդունիչ /գլխամասային հանգույց/
2. Ճնշումային դերիվացիոն խողովակաշար
3. Էլեկտրահաղորդման գծեր և հենասյուները:
4. Փիէկի շենք

Գետի 1490,0 մ հատվածում նախատեսվում է կառուցել պատվարային ջրընդունիչ, որն իրենից ներկայացնում է գործնական պրոֆիլով բետոնային ջրթափ կառուցվածք, որի ձախ կողմում կառուցվելու է տղմազտիչ և ջրընդունիչ: Վերին բյեֆի նիշը կազմում է 1492,60մ: Դերիվացիայի թողունակությունը կազմում է 3.5 մ^3/վրկ : Փիէկի շենքի չափերը կազմում են 10.0 x 36մ: Ներքին բիեֆում ջրի նիշը կազմում է 1338,6մ: Դերիվացիայով փիէկի կարևոր էներգետիկ պարամետրերն են՝ հաշվային ելքը, հաշվային ճնշումը և դրվածքային հզորությունը:

Դերիվացիոն խողովակաշարի երկարությունը՝ L = 7550 մ, ստատիկ ճնշումը՝ Hu = 154,0 մ; հաշվարկային ճնշումը՝ H =140,0 մ, հաշվարկային ելքը՝ Q =3,5 մ^3/վրկ իսկ դրվածքային հզորությունը՝ N = 4200կվտ:

Միջին տարեկան արտադրվող էլեկտրաէներգիայի քանակը կազմելու է 17,74մլն.կվտ.ժ: Նախագծվող փիէկը պետք է հնարավորինս օգտագործի Զքնաղ գետի 1492.6 մ և 1338.6մ նիշերի միջև եղած հիդրոէներգետիկ անկումը, հաշվի առնելով դրանց արդյունավետությունը:

Տղմազտիչի և ջրընդունիչի մուտքամասում տեղադրվելու են 2 հատ հարթ փականներ: Վերին բյեֆի ջրի նիշը կազմում է 1492,6մ: Բետոնային ջրաթափային պատվարի բարձրությունը կազմում է 2.6մ: Ջրթափային պատվարից հետո առավելագույն ելքերի ավելցուկային էներգիան մարելու համար նախատեսվում է ջրծեծ հորորի երկարությունը ընդունվում է 11,մ, իսկ խորությունը 0,60մ; Ջրծեծ հորից հետո նախատեսվում է ռիսբերմա լրացուցիչ ավելցուկային էներգիան մարելու համար: Տղմազատարանը երկխցանի է լինելու 22մ երկարությամբ և 5մ լայնությամբ: Տղմազատարանում հավաքվող ջրաբերուկները գետի ջրերի լվացման միջոցով հեռացվելու են դեպի գետ՝ տղմազատարանի վերջում տեղադրված փականների միջոցով: Պատվարային ջրընդունիչի կից տարածքում նախատեսվում է պահակակետ՝ 15մ^2: Պատվարային ջրընդունիչի աջ կողմում նախատեսվում է կառուցել ձկնուղի: Ձկնուղին նախատեսված է ապահովելու համար ձկների տեղաշարժը վերին բյեֆից ներքին բյեֆ և հակառակը: Ձկնուղին իրենից ներկայացնում է երկաթ-բետոնե խցեր/հորեր/, որի չափերը հատակագծում 1,70*1,50մ է, ջրի մակարդակների տարբերությունը կազմելու է 0,30մ: Ձկնուղու երկարությունը 27,20մ, իսկ հատակի լայնությունը 1,1մ: Ձկնուղու միջոցով բաց է թողնվում բնապահպանական ելքերը՝ /210-660/ լ/վրկ: Ձկնուղու շեմքի նիշը ընդունված է 0,5մ բետոնային ջրթափային պատվարի կատարի նիշից,այսինքն 1492,10մ:

Ճնշումային խողովակաշարն ամբողջությամբ նախատեսվում է կառուցել գետի ձախ ափում: Խողովակաշարն հիմնականում անցնում է գոյություն ունեցող հողային ճանապարհի կողքով, որտեղ տարածված են ժամանակակից դեյուվիալ–էյուվիալ–կոլյուվիալ առաջացումները: Նախատեսվում է կառուցել միաճյուղ մետաղական դերիվացիոն խողովակաշար, որի երկարությունը 7550,0մ: Խողովակաշարը լինելու է պողպատյա: Այն սկսվելու է ջրընդունիչ

ջրհորից և անցնելով հիմնականում գոյություն ունեցող ճանապարհի եզրով ավարտվելու է տուրբինային փականի մոտ: Խողովակաշարը հիմնականում ծածկվելու է բնահողով:

Ճնշումային խողավակաշարի մուտքամասում տեղադրվելու է ձկնապաշտպան ցանց, որի տրամագիծը 2000մմ է, ցանցը իրենից ներկայացնում է 6A1 ամրան որոնց միջև հեռավորությունը կազմում է 20մմ:

Փիէկի շենք կառուցվելու է Չքնաղ գետի աջափնյա հատվածում, որը գետակի հունից բարձր է մոտ 3.0մ , շենքի չափերը կազմում են 10.0 x 36մ: Շենքը վերգետնյա տիպի է, որտեղ նախատեսվում է տեղադրել չորս հիդրոագրեգատ՝ բաղկացած ռեակտիվ շառավղա-առանցքային տուրբիններից և սինխրոն գեներատորներից: Փիէկի շենքում տեղակայված չորս հիդրոագրեգատները կունենան ավտոմատ կարգավորման և ղեկավարման համակարգ: Հիդրոէլեկտրակայանի ղեկավարման բոլոր վահանակների համար նախատեսվում է առանձին տեղամաս շենքի ներսում: Տուրբինների փականները նույնպես տեղավորվում են շենքի մեջ: Փիէկի հաշվային ելքը վերցվում է պատվարային ջրընդունիչից սկիզբ առնող ճնշումային խողովակաշարից, որը տեղադրվում է գոյություն ունեցող ճանապարհին զուգահեռ և շենքից հետո վերադարձվում է գետ, առանց որակի ու քանակի փոփոխության:

Ենթակայանը զբաղեցնելու է 180մ ^{2} մակերես, ենթակայանում տեղադրվելու է մեկ հատ 35 կՎ լարման, 4000կՎԱ հզորության տրանսֆորմատոր: Փիէկի շահագործման ընթացքում արտադրված էլեկտրաէներգիան 2885 մ օդային գծով միանալու է «Սարատովկա» 35/10կՎ ենթակայանի 35կՎ ԲՍ-ին: ՕԳ-ն մոնտաժվում է AC-70/11 տիպի այլումինե կամ պողպատե հաղորդալարով՝ 45 տարի օգտագործման առավելագույն ժամկետով: Օդային գծի համար տեղադրվելու են 24 հատ մետաղական հենասյուններ, որոնց առավելագույն խարսխային թռիչքը կազմում է 262մ: Միջհենարային տարածությունները վերցված են ելնելով տեղանքի կլիմայական պայմաններից/ըստ քամու և մերկասառույցի/: Հաղորդալարերի առավելագույն կախվածքի դեպքում ապահովվելու է գետնից 7մ ուղղաձիգ բարձրություն: Ուղեգծում նիշերը տատանվում են 1336.5-1452.3մ:

Պատճառաբանական մաս. Փորձաքննական գործընթացին մասնակցել են՝ առողջապահության և կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի և ջրային կոմիտեները, Լոռու մարզպետի աշխատակազմը, շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժանումները:

Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է Օրենքի պահանջներին համապատասխան: «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի և Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշման հավելվածի՝ 2025թ. օգոստոսի 15-ին՝ Ստեփանավան համայնքում և Ուրասար բնակավայրում կայացել է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ երկրորդ հանրային լսումը, որի ընթացքում բարձրացվել են հարցեր և առաջարկներ գործունեության իրականացման վերաբերյալ:

Փորձաքննական գործընթացում, լրամշակման փուլում Ընկերությունը՝ համաձայն պահանջի ներկայացրել է բաձրավոլտ էլեկտրական ցանցին միացման հենասյուների և

դերիվացիոն խողովակաշարերի տեղադիրքն արտացոլող կոորդինատները, որոնք ի սկզբանե բացակայել են ՇՄԱԳ փաթեթում:

Չքնաղ գետի վրա հիդրոէլեկտրակայանի (ՓՀԷԿ) կառուցման նախագծի շրջանակում իրականացված փորձաքննությամբ հաշվի են առնվել ինչպես էներգետիկ օգուտները, այնպես էլ՝ հնարավոր էկոհամակարգային, սոցիալ-տնտեսական և մշակութային ռիսկերն ու վնասները:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «ՍՏԵՓԱՆՈՐ-1» ՍՊԸ-ի կողմից Լոռու մարզի Ստեփանավան համայնքում «Չքնաղ-1» փիէկի 7,5 կմ միաճյուղ մետաղական ճնշումային դերիվացիոն խողովակաշարից շուրջ 5 կմ (որից՝ ըստ կադաստրային քատեզների շուրջ 403 մ երկարությամբ, 0,13 հա մակերեսով և ըստ անտառկառավարման պլանի շուրջ 5 կմ երկարությամբ՝ 1,7 հա մակերեսով) անցնում է պետական սեփականություն հանդիսացող անտառային հողերով, իսկ հենասյուների տեղադիրքը որոշ հատվածներում համընկնում է հատուկ պահպանվող տարածքների՝ պատմամշակութային հողերի հետ: Փորձաքննությամբ տեղեկատվությունը ներկայացվել է ԿԳՄՍ նախարարության պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության փորձագետներին, ովքեր տեղում իրականացրել են չափագրման աշխատանքներ և **փաստացի կոորդինատների** համընկնում չեն արձանագրել իրականացվող աշխատանքների հետ:

Ընկերությունը ՇՄԱԳ փաստաթղթով ներկայացրել է փիէկի շենքի տարածքի նկարագիր, ըստ որի առկա է խոտածածկ, ծառաթփեր, ծառեր՝ 60 ծառ, որից 35- 36-ը մեծ ծառեր են՝ 20 տարեկան և ավելի հասակով: Առկա են նաև հատուկենտ սոճիներ, բոխի, եղևնի և այլ տեսակներ, ինչպես նաև մասրենիներ, մոշ, չիչխան և այլ թփատեսակներ: Նախագծի իրականացման ընթացքում ծառերը հատվելու են, որոնց դիմաց ընկերությունը Ստեփանավանի համայնքապետարանի կողմից տրամադրված տարածքներում պարտավորվում է տնկել շուրջ 649 հատ ծառ: Սակայն փորձաքննությամբ փաստվել է, որ համայքնի կողմից տրվել է ևս մեկ հակասական գրություն, համաձայնություն հատվող ծառերի **նույն թվով** փոխհատուցումն ապահովելու համար:

Ծառաթփային կազմի հատման վերաբերյալ համաձայնություն համայնքը կարող է տրամադրել միայն համայնքապատկան հողերում, իսկ անտառային և պատմամշակութային հողերում իրականացվող աշխատանքների վերաբերյալ համաձայնություն կարող են տրամադրել միայն լիազոր մարմինները:

Համաձայն «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից տրված դիրքորոշման՝ դերիվացիոն խողովակաշարերի անցկացման աշխատանքների արդյունքում հատման ենթակա կլինեն զգալի թվով տարբեր տեսակի և տրամագծի (կաղնի, բոխի, տանձի, խնձորի, հացի, թխկի, կեչի, ուռի և այլ) ծառեր և թփեր, որոնք ներկայացված չեն եղել ՇՄԱԳ փաստաթղթում և չկա համապատասխան լիազոր մարմնի կողմից տրված համաձայնեցումը նախագծի տվյալ հատվածնում գործունեության իրականացման համար:

Չքնաղ գետի բնական հոսքի փոփոխությունը կարող է բացասաբար անդրադառնալ գետի էկոհամակարգի վրա: Մասնավորապես՝ որոշ ձկնատեսակներ կարող են կորցնել իրենց սեզոնային միգրացիոն ուղիները, ինչը կհանգեցնի դրանց թվաքանակի կրճատման կամ ամբողջությամբ անհետացման: Տուրբինների միջով անցնող ջրի հոսքը կարող է նաև

հանգեցնել ջրի ջերմաստիճանի փոփոխության, ինչը նույնպես բացասաբար կանդրադառնա կենսաբազմազանության վրա:

Փիէկի կառուցմանն ուղեկցող ենթակառուցվածքները՝ ճանապարհներ, խողովակաշարերն և շինությունները զգալիորեն կփոխեն տարածքի գեղատեսիլ բնապատկերը: Սա իր հերթին խոչընդոտելու է ոչ միայն զբոսաշրջության զարգացմանը, այլև՝ գետի հարակից համայնքների բնակիչների սեզոնային հանգստի և ձկնորսության կազմակերպմանը:

Շինարարական աշխատանքների համար նախատեսված ծառահատումները կարող են ժամանակի ընթացքում խաթարել լանջերի կայունությունը՝ հանգեցնելով հողի էրոզիայի և սողանքների առաջացման: Սա կբերի ինչպես բնապահպանական, այնպես էլ սոցիալ-տնտեսական նոր խնդիրների առաջացմանը:

Ծառահատման արդյունքում տեղի կենսաբազմազանությունը լուրջ վնասներ կկրի. կենդանատեսակները ստիպված կլինեն լքել իրենց բնադրավայրերը և տեղափոխվել այլ տարածքներ, հաճախ չհարմարվելով նոր պայմաններին, ինչը կարող է նվազեցնել նրանց թվաքանակը, հանգեցնել որոշ տեսակների տեղական անհետացմանը և կենդանական աշխարհի բնական հավասարակշռության խախտմանը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Լոռու մարզի Ստեփանավան համայնքում «Զքնաղ-1» փիէկի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Շուշանիկ Կարապետյան